

ՀՐԱԲՒԱՅԻՆ ՄՈՒԻՐ, ժայթքումների ընթացքում դուրս նետված լավային, առանձին միներալների և օտար ապարների մանրագույն մասնիկներ: Մոխրի առաջացումը բացատրվում է հրաբխային պայթյունների ժամանակ լավայի մանրացմամբ: Հ. մ-ի չափերը տատանվում են 0,1—2 մմ-ի սահմաններում: Լինելով բավականաչափ թեթև՝ Հ. մ. կարող է օդային հոսանքների միջոցով տեղափոխվել և նստել ժայթքման վայրից հարյուրավոր և հազարավոր կմ հեռավորության վրա:

ՀՐԱԲՒԱՅԻՆ ՆԵՏՎԱԾՔՆԵՐ, հրաբխային ժայթքումների փխրուն արգասիքներ՝ ռումբեր, խարամներ, լապիլներ, ավազ, մոխիր, ինչպես նաև հրաբխափողի և հրաբխային օջախի պատերից պոկված հին լավաների և ապարների բեկորներ: Հ. ն. ըստ ծագման լինում են՝ աուտիզեն (ժայթքող մագմայի հետ անմիջականորեն կապված, տեղում առաջացած) և ալլոտիզեն (հրաբխին օտար, օրինակ, նստվածքային ապարների բեկորներից կազմված): Վերջին դեպքում Հ. ն. անվանում են նաև

է ք ա պ լ ո զ ի վ ք ե կ ո թ ն ե ր :

ՀՐԱԲԻԱՅԻՆ ՏՈՒՑ, ապար, որ առաջացել է հրաբխային ժայթքումների պինդ արգասիքներից՝ մոխրից, ավազից, լապիլներից, ռումբերից, ոչ-հրաբխային ծագման ապարների բեկորներից՝ խտացման և ցեմենտացման ճանապարհով: Կախված մասնակցող բեկորների բնույթից, Հ. տ-երը լինում են. լիթոկլաստիկ՝ ապարների բեկորներ, բյուրեղակլաստիկ՝ առանձին միներալների բեկորներ, վիտրոկլաստիկ՝ հրաբխային ապակու բեկորներ և խառը կազմի՝ վիտրո-բյուրեղակլաստիկ, լիթո-բյուրեղակլաստիկ ևն: